Երգարան

Քերթողահայրեան

Կ.պոլիս, 1801

[illegible]

Թվը կա (ՌՄԾ թ

[illegible]

1876-ԱՀ

756-2003

Ծննդ-յան

80 ամյակի առթիվ

4/III, 03 թ.

(ԿՐԹՈՒԹԵԱՆ)

# ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ։

Հաւաքեցեալ յումեմնէ բանասի
րէ համառօտաբար՝ վասն մանկանց
անվարժից կամ թերավարժից։

Տպագրեցեալ ՚ի Հայրպտութեն Գերա
գահ Աթոռյն Սբյ Էջմիածնի Տ՟ն
Դանիէլի Արքեպս Կաթուղիկոսի
Ամենայն Հայոց։

Եւ ՚ի Պատրիարգութեն Սբյ Աթոռյն
Էջմ՝ Տ՟ն Թէոդորոսի Եր
ջանկափայլ Վարդապետի։

Իսկ և մեծհամբաւ հրամանաւ մեծի
Արքայանիստ Մայրաքաղաքիս Կոս
տանդնուպօլսոյ Սրբազան Արհի
Եպիսկոպոսի Տեառն Գրիգորի
Աջաբան Պատրիարգի։

Ի Թուին Հայոց՝ ՌՄԾ։ Դեկ՟ Իգ։
Ի Տպարանի՝ Յօհաննէսեան Պօղոսի։



Երևան Ոսկանյանց
ազգային գրադարան



Վամս լինել դու քրիստոս Նեւոյ·
Զայս 'ի մըտի քում հաւաքեայ:

Ս՟ա Առաջին. Հարց:

Դու քրիստոնեա՞յ ես:

Պատասխանի:

Այո՛ քրիստոնեայ եմ:

Հարց: Ո՞ինչ է նշանն քրիստոնէից:

Պատ: Սուրբ և պատուական խաչն քրիստոսի:

Հարց: Խաչակնքեա՞մ զի ուսուանեմ թէ՝ որպէս խաչակնքես:

Պատ: Յանուն հօր և որդւոյ և հոգ-ւոյն սրբոյ:

Հարց: Ո՞վ ստեղծ զքեզ:

Պատ: Ա՟ծ ամենակարողն:

Հարց: Ինչու՞ համար ստեղծ:



Պատ:

Ներսես Ոսկանյանից
ազգային գրադարանին

Պատ. Միայն՝ զի զինքն ճանաչիցեմ, և զկամքն կատարիցեմ. և վերջապէս արքայութեան արժանաւորիցիմ:

Հարց. Ո՞ ինչ է Աստուած:

Պատ. Է՝ ստեղծօղ երկնի և երկրի, և երևելեաց և աներևութից:

Հարց. Աստուած քանի՞ է:

Պատ. Մի է:

Հարց. Աստուծոյ անձինքն քանի՞ք են:

Պատ. Երեք են:

Հարց. Երեք անձանց անուանքն զի՞նչ են:

Պատ. Միոյն անունն՝ Հայր է, երկրորդին՝ Որդի է, և երրորդին՝ Հոգի սուրբ:

Հարց. Ուրեմն Հայր Աստուա՞ծ է:

Պատ. Այո՛ Աստուած է:

Հարց. Որդին Աստուա՞ծ է:

Պատ. Այո՛ Աստուած է:

Հարց. Հոգին սուրբ Աստուա՞ծ է:

Պատ. Այո՛ Աստուած է:

Հարց. Ապա ուրեմն երեք Աստուածք են:

Պատ. Ո՛չ երեք Աստուածք են, այլ մի Աստուած և երեք անձինք:

Մասն Նախերորդ։ Հարց։

Այս յերից անձանց մի անձն մարդացաւ։

Պատ։ Այո՛ մարդացաւ։

Հարց։ Ո՞ր անձն մարդացաւ։

Պատ։ Որդւոյ անձն մարդացաւ։

Հարց։ Հայր ևս մարդացաւ։

Պատ։ Ո՛չ։

Հարց։ Հոգին սուրբ ևս մարդացաւ։

Պատ։ Ո՛չ։

Հարց։ Ապա՝ ո՞ր անձն մարդացաւ։

Պատ։ Մի միայն որդւոյ անձն մարդացաւ։

Հարց։ Մարդացաւ ասելն՝ զինչ ասել է։

Պատ։ Մեզ նման կատարեալ մարդ եղև ասել է, մարմին առնլով՝ ի մաքուր յարենէն կուսին Մարիամու։

Հարց։ Մարմին առօղն ո՞վ է։

Պատ։ Բանն Աստուած, որ է միածին որդին։

Հարց։ Զ՞ինչ է առեցեալն։

Պատ։ Հոգի՝ միտք՝ և մարմին, որք են



մարդ

մարդկայինք։

Հարց։ Օ՛, իմրդ առօղն և առեցեալն լինելն մի անձն և մի բնութիւն։

Պատ։ Քանզի բանն Աճ այնպէս միաւո-րեաց ընդ անձին և բնութեան իւ-րում զմարդկութիւն՝ որպէս մարմին մեր միաւորեալ է ընդ հոգւոյ մե-րում, և մի բնութիւն եղեալ է ընդ նմա առանց շփոթման։ Այնպէս և մարդկութիւն միաւորեցաւ Ե անձին և ընդ բնութեան բանին Այ. և մի աճամարդկային բնութիւն եղև ընդ նմա, առանց շփոթ-ման և առանց փոփոխման։

Հարց։ Յս անունն՝ զինչ ասել է։

Պատ։ Փրկիչ ասել է. զի փրկեաց ըզ-մեզ ՚ի ձեռաց սատանայի, և ՚ի տանջանացն դժոխոց։

Հարց։ Քս անունն՝ զինչ ասել է։

Պատ։ Օծեալ ասել է, վն զի բանն Աճ մարդացեալ օծեցաւ ՚ի հօրէն Այ հոգւովն սրբով. որպէս պետրոս առա-քեալն ուսուցանէ. (Գործ". Ժ։)



Հարց։

Հարց. Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ յորում աւուր ծնաւ։

Պատ. Ի վեցում աւուրն յունվարի ամսոյն։

Հարց. Յումմէ՞ ծնաւ։

Պատ. Ի կուսէն Մարիամայ. որպէս ի վերն ասացաւ։

Հարց. Մարիամ աստուածածինն՝ կոյս մնա՞ց յետ ծննդեանն։

Պատ. Այո՛, վասն զի անարատ յղացաւ, և անապականաբար ծնաւ. վասն որոյ՝ յետ ծննդեանն, կոյս մնաց։

Հարց. Քրիստոս ըստ աստուածութեան ծնեա՞լ էր ի հօրէ։

Պատ. Այո՛ ծնեալ էր։

Հարց. Ըստ մարդկութեան ծնա՞ւ ի մօրէ։

Պատ. Այո՛ ծնաւ։

Հարց. Առաջին ծնունդն ո՞րպէս էր։

Պատ. Անժամանակ և անմարմին էր ծնունդն՝ առանց մօր։

Հարց. Երկրորդ ծնունդն ո՞րպէս էր։

Պատ. Ժամանակեայ, և մարմնով էր ծնունդն՝ առանց հօր։

Հարց. Քրիստոս քանի՞ տարի շրջագայեցաւ ի վերայ երկրի։

Պատ: Երեսուն և երեք տարի ու կէս:

Հարց: Այնքան ժամանակ՝ զի՞նչ արեր:

Պատ: Ուսոյց հետևողաց իւրոց զճա-նապարհն ճշմարտութեան:

Հարց: Յետ այնքան ժամանակի կա-տարմանն՝ զի՞նչ արար:

Պատ: Եկն կամաւ ՚ի չարչարանս, խա-չեցաւ՝ և մեռաւ վ̃ մեր՝ ը̃ առաքելոյն, թէ ք̃ մեռաւ վ̃ մեղաց մերոց, և այլն:

Հարց: Ընդ է՞ր մեռաւ:

Պատ: Վասն փրկութեան մերոյ:

Հարց: Յորի՞ վերայ մեռաւ:

Պատ: ՚Ի վերայ խաչափայտին:

Հարց: Եթէ քրիստոս աստուած էր՝ զիա՞րդ մեռաւ:

Պատ: Ո՛չ ասեմ՝ թէ ա̃ծ ային բնու-թեամբն մեռաւ, այլ առեցել մարմնովն, այսինքն անճառելի միաւորութեամբն. վասն որոյ և ասի՝ ա̃ծ խաչեցաւ և մեռաւ:

Հարց: Զկնի մահուանն՝ զի՞նչ արա-րին զմարմինն քրիստոսի:

Պատ. Առին ՚ի խաչէն, և եդին ՚ի նորափոր գերեզմանի անբաժանելի ա՟ծութեամբն։

Հարց. Քանի՞ օր մնաց ՚ի գերեզմանի։

Պատ. Երեք օր։

Հարց. Որո՞վ էջ ՚ի դժոխս։

Պատ. Աստուածային հոգւովն։

Հարց. Յորժամ էջ ՚ի դժոխս՝ զի՞նչ արար։

Պատ. Աւերեաց զդժոխս, և ազատեց զհոգիսն՝ որք էին ՚ի բանտին։

✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲

## Դաս Երրորդ։ Հարց։

Սուրբ եկեղեցի ասեն՝ զի՞նչ ասել է։

Պատ. Եկեղեցին է ժողովումն ա՟մ հաւատացելոց քրիստոնէից՝ որք միաբանեալք են յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ։

Հարց. Զի՞նչ է խորհուրդ եկեղեցւոյ։

Պատ. Է՛ ազատութիւն հոգևոր։

Հարց. Քանի՞ք են։

Պատ. Եօթն են։

Հարց։ Ո՞ինչ են։
Պատ․ Մկրտութի · Դրոշմ · Հաղորդութի · Ապաշխարութի · Պսակ · Ձեռնադրութիւն · և Վերջին օծումն։
Հարց։ Մկրտութիւնն զի՞նչ է։
Պատ․ Է՝ լուացումն արտաքին մարմնոյ· և մաքրումն ներքին հոգւոյ · և ազատումն ՚ի սկզբնական մեղաց։
Հարց։ Դրոշմն զի՞նչ է։
Պատ․ Է՝ հաստատութիւն խորհրդոց ՚ի հաւատս քի, և կնիք ճանաչման· որ առնեալ լինի առ ՚ի զօրացուցանել և քաջացուցանել զմարդն, և լինել զինուոր քի։
Հարց։ Հաղորդութիւնն զի՞նչ է։
Պատ․ Է՝ մարմին և արիւն տեառն մերոյ յսի քսի · և կերակուր հոգւոր, որ և վերջապէս տայ մեզ ժառանգել զկեանս յաւիտենականս։
Հարց։ Ապաշխարութիւնն զի՞նչ է։
Պատ․ Է՝ զղջացեալ չարեաց լալ՝ և ըզ


լալն

ըսել նրա՝ մի՛ ևս գործել. կամ
դարձումն ՚ի մեղաց, և գտանել
վերստին զկորուսեալ շնորհսն:

Հարց: Քահանայութիւնն զի՞նչ է:

Պատ: Է՝ հոգևոր իշխանութիւն իմն,
որով կարող է մատուցանել ըզ
պատարագ. նա և զայլ՝ խորհուրդս
դըս կատարել:

Հարց: Պսակն զի՞նչ է:

Պատ: Է՝ խորհուրդ եկեղեցւոյ, որ
՚ի բաց բառնայ զշնութիւնն և
ըզպոռնկութիւնն, և անլու‑
ծանելի կապանօք կապէ զայրն
և զկինն ընդ իրերարս, վասն
փրկութեան իւրեանց. ծնա‑
նիլ և սնուցանել զորդիս՝ ՚ի
պաշտօն աստուծոյ:

Հարց: Վերջին օծումն զի՞նչ է:

Պատ: Է՝ զինուորութիւն հոգեկան՝ որ
տուեալ լինի ՚ի մկրտութեանն
ժամանակի՝ ընդ դրոշմին և ընդ
հաղորդութեանն, առ ՚ի չզրկիլ
և յայսմանէ խորհրդոյ յանկար
ծահաս մահուամբ:

Հարց: Առաքինութիւնն զինչ է:

Պատ: Է՛ ունակութի մտաց՝ զոր ընդու-նի հոգին, և լինի բարեգործ:

Հարց: Քանի՞ք են:

Պատ: Եօթն են:

Հարց: Ո՞յք են՝ ասա, զի լուայց:

Պատ: Հաւատ. Յոյս. Սէր. Արիու-թի. Արդարութի. Խոհեմու-թիւն. և Ողջախոհութիւն:

Հարց: Հաւատն զինչ է:

Պատ: Է՛ պարգև մի հեղեալ՚ի մեզ յաստուծոյ, զի նովաւ ճանաչեմք զած՝ ամենազօր և ստեղ-ծիչ լեալ:

Հարց: Յոյսն զինչ է:

Պատ: Յոյսն է ստոյգ ակնկալութի հանդերձելոց բարեացն, զոր տա-լոց է ած յաւուրն հատուցման:

Հարց: Սէրն զինչ է:

Պատ: Է՛ ունակութի մտաց, որով սիրեմք զած վասն բարերարու-թեն. և զընկերս մեր՝ հաւա-սար մեզ, վասն այ:



Հարց:

Հարց: Արիութիւնն զինչ է:
Պատ: Այն՝ ընդդէմ լինել փորձութեանց աշխարհի, և նեղութեանց համբերել:
Հարց: Արդարութիւնն զինչ է:
Պատ: Այն՝ հաւասարաբաշխութիւն ՚ի հոգի և ՚ի մարմին, և ոչ իւրացուցանել զինչս այլոց՝ ինքեան:
Հարց: Խոհեմութիւնն զինչ է:
Պատ: Այն՝ ընտրութիւն առնել ՚ի մէջ բարւոյ և չարի. չխաբել զոք՝ և չխաբիլ յումեքէ:
Հարց: Ողջախոհութիւնն զինչ է:
Պատ: Այն՝ ՚ի բաց մերժել յինքենէ զամ մարմնական հեշտութիւնս և ցանկութիւնս՝ որք պատահեն:
Հարց: Քանի՞ք են պարգևք հոգւոյն սրբոյ:
Պատ: Եօթն են. այսինքն, Իմաստութիւն. Հանճար. Խորհուրդ. Զօրութիւն. Գիտութիւն. Ածպաշտութիւն. և Երկիւղ այ:
Հարց: Քանի՞ք են գործք ողորմութեան՝

 որք

որք ՚ի յիշատակ գան յաւուրն դատաստանին:

Պատ: Եօթն են. այսինքն,

Կերակրել զքաղցեալս.

Արբուցանել զծարաւեալս.

Զգեցուցանել զմերկս.

Ժողովել զօտարս.

Տեսանել զհիւանդս.

Այց առնել բանտարգելոց.

Թաղել զմեռեալս.

Ահա այսոքիկ՝ են մարմնաւոր ողորմութիւնք:

Հարց: Կա՞ն ևս հոգևոր ողորմութ̅ք:

Պատ: Այո՛ կան այլ ևս եօթն հոգևոր ողորմութիւնք. այսինքն,

Խրատել զերկմիտսն.

Առաջնորդել զտգէտս.

Աշտամբել զմեղաւորս.

Մխիթարել զտրտմեալս.

Թողուլ զպարտս.

Յանձն առնուլ զվիշտս.

Աղաչել զա̅ծ վ̅ս կենդանեաց և մեռելոց, և վասն մեղաց:



Հարց:

Հարց: Քանի՞ք են օրինացն բանք, կամ ՚ի ձեռն որոյ ետ ած զնա:

Պատ: Տասն են բանք օրինացն այ, և ՚ի ձեռն Մովսէսի ետ ՚ի լերանն Սինայի:

Հարց: Ասա մի ըստ միոջէ՝ զի գիտացից:

Պատ: Առաջինն՝ Ես եմ տր ած քո. և մի՛ եղիցի քեզ այլ ած՝ բաց յինէն. և մի՛ դիցես զանուն այ քո ՚ի վերայ սնոտեաց:

Երկրորդն՝ մի՛ արասցես քեզ կուռս ըստ ամենայնի նմանութե. յերկինս ՚ի վեր, և յերկիր ՚ի խոնարհ:

Երրորդն՝ յիշեա՛ զի սրբեսցես զօր շաբաթուն. որ է մեզ՝ կիւրակէ:

Չորրորդն՝ պատուեա՛ զհայր քո և զմայր քո:

Հինգերորդն՝ մի՛ սպանաներ:

Վեցերորդն՝ մի՛ շնար:

Եօթներորդն՝ մի՛ գողանար:

Ութներորդն՝ մի՛ սուտ վկայեր զընկերէ քումմէ:

Իններորդն՝ մի՛ երդնուր սուտ յանուն տեառն ա՟յ քոյ:

Տասներորդն՝ մի՛ ցանկանար կը- նոջ ընկերի քոյ. և մի՛ տան նո- րա. և մի՛ ընչից նորա. և մի՛ ա՟մ իրաց նորա՝ որք նորա իցեն:

Հարց: Քանի՞ք են ազգք մեղաց:

Պատ: Երկու. այսինքն, սկզբնական. և ներգործական:

Հարց: Զի՞նչ է սկզբնականն. և զի՞նչ ներգործականն:

Պատ: Սկզբնականն՝ 'ի հօրէն մերմէ ադամայ սերեալ ունիմք ամե- նեքեան՝ որք ջնջին մկրտութ՟բ: Իսկ ներգործականն՝ յետ մկրտութեանն՝ կամօք մերովք որ գործեմք, այն է:

Հարց: Ներգործականն 'ի քանի՞ս բաժանի:

Պատ: Յերիս. այսինքն, մահացու. ներելի. և փոշետեսակ:

Հարց: Մահացուն զի՞նչ է.

Պատ: Այն՝ զի յորոյ վերոյ գտա-

Նիւթի՝ զնա մահացուցանէ։

Հարց։ Ներելին, և փոշետմանն զինչ է։

Պատ։ Նոքա են, զի եթէ մարդ ոք գործէ և մոռանայ. կամ թեթևապս կրէ զապաշխարանքն կամ լռապս չխոսրէ, թողու ած. զերծ ներելի և փոշետեսակ ասելն՝ խիստ թեթև մեղք ասել է. ոչ անոռանքն պարզապս յայտնէն։

Հարց։ Մահացու մեղք քանի՞ք են։

Պատ։ Եօթն են. այսինքն, Հպարտութիւն. Նախանձ. Բարկութիւն. Ծուլութիւն. Ագահութիւն. Որկրամոլութիւն. Բոզախոհութիւն։

Հարց։ Վրէժխնդիր մեղքն ո՞յք են։

Պատ։ Են այսոքիկ։ Անմեղ ըսպանումն. Սոդոմականութիւն. Զրկանք աղքատաց. Հատանել զվարձս մշակաց։ Զորս այսոքիկ՝ են սարսափելիք. յորոց տր ած փըր
կեսցէ. Ամէն։

Հարց։ Քանի՞ք են առաքինութիւնք ընդդէմ սոցա։

Պատ։ Եօթն են․ այս, Խոնարհութիւն ընդ-
դէմ Հպարտութեան․ Բարեհաճութիւն
ընդդէմ Նախանձու․ Հեզութիւն
ընդդէմ Բարկութեան․ Առատա-
սրտութիւն ընդդէմ Ագահութեան․
Արիութիւն ընդդէմ Ծուլութեան․
Պահեցողութիւն ընդդէմ Որկ-
րամոլութեան․ Ողջախոհութիւն․
ընդդէմ Բղջախոհութեան։

Հարց։ Մեղքն՝ քանի՞ բանիւ գոր-
ծեալ լինի։

Պատ։ Երեք․ այսինքն, Խորհրդով․
Բանիւ․ և Գործով։

Հարց։ Պատմեա՛ մի ըստ միոջէ՝ որ իմանամ։

Պատ։ Խորհրդովն մեղանչել կոչի, յոր
ժամ ՚ի սրտի մերում չար խորհիմք։
Բանիւն այն է, երբ որ հայհոյինս
և բամբասանս հանեմք ՚ի բերանոյ։
Գործովն, որ ձեռօք՝ կամ ոտիւք
կատարեմք, և՚ի գլուխ ածեմք։

Հարց։ Քանի՞ բանք են՝ որ զմարդն
վախեցնեն ՚ի զմեղս գործելոյ։

Պատ։ Չորս․ այս, Մահն․ Ահեղ



դա

դատաստանն. Ահագին դժոխքն.
և անճառելի Արքայութիւնն:

Հարց: Մ՞ի միայն զքրիստոնէական հաւատոյ զորպիսութիւնն ճանաչելով՝ փրկութեան հասանիմք, թէ ո՞չ:

Պատ: Մ՞ի միայն ճանաչողութեամբ ո՛չ հասանիմք:

Հարց: Ինչու համար:

Պատ: Վասն այն, զի հաւատք՝ առանց գործոց, մեռեալ մարդոյն է: որպէս Յակոբեանն վկայէ թէ՝ հաւատք առանց գործոց, մեռեալ է:

Հարց: Ո՞րինչ են բարի գործքն:

Պատ: Աղօթք. Պահք. և Ողորմութիւնք:

Հարց: Գիտե՞ս զտէրունական աղօթքն:

Պատ: Այո՛ գիտեմ:

Հարց: Ասա՝ զոր ուսանեմ:

Պատ: Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր. և թող մեզ զպար



տիս

տիս մեր՝ որպէս և մեք թողումք
մերոց պարտապանաց. և մի՛ տա֊
նիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ՝
փրկեա՛ ՚ի չարէ: Զի քո է ար֊
քայութիւն և զօրութիւն և
փառք յաւիտեանս, ամէն:

Հարց: Գիտէ՞ս առ սրբուհի Աստուածածնին
սահմանադրեալ զաղօթքն:

Պատ: Այո՛ գիտեմ:

Հարց: Ասա՝ զոր լուայ:

Պատ: Անկանիմք առաջի քո՝ տիրամայր
սուրբ Աստուածածին, և աղա֊
չեմք զանարատ զկոյսդ. բարեխօ֊
սեա՛ վասն անձանց մերոց, և ա֊
ղաչեա՛ զմիածին որդիդ. փրկել
զմեզ ՚ի փորձութենէ, և յամե֊
նայն վտանգից մերոց: Որ ար֊
ձակիչդ ես կապելոց՝ պարգևա֊
տու ամենեցուն. այսօր հայց֊
մամբ ծերունւոյն՝ արձակեա՛ և
զիս զբազմամեղս ՚ի կապանաց մա֊
հու՝ ՚ի կեանս յաւիտենից, ամէն:

Հարց: Յորժամ քահանայն առնէ՛ք կերէ՛ք
ասէ՝ դու զի՞նչ ասել պարտիս:

Պատ: Ըղձիւ զայս հարկաւոր · Ա՟ծ մարդասէր, որ առաքեցեր զոր դեղ քո միածին, և նորին ա՟ծայինն կարողութ՟ն՝ զհայրական գթութի քո ծանեաք · վ՟ս զի ա՟ծապս էր խաչիլն կամօք վ՟ս մեր · այնպ՟ ժուժկալութ՟ երեքօրեայ թաղմանն · և երանաւէտ յարութ՟ն · և ա՟ծայինն համբարձումն փառօք հօրդ · և ընդ աջմէ քումմէ նըստելն · զորս հաւատամ և երկիր պագանեմ:

Աշակ: Ո՞րքան է աստիճան հաւատոյ:

Պատ: Երկոտասան բանք առաքելոյն՝ որք են ՚ի հաւատամքն:

Աշակ: Ա՟սա զհաւատամքն:

Պատ: Հաւատամք՚ի մի ա՟ծ հայրն ամենակալ · յարարիչն երկնի և երկրի՝ երևելեաց և աներևութից: Եւ՚ի մի տ՟ր յ՟ս ք՟ս որդին ա՟յ՝ ծնեալն յա՟յ հօրէ՝ միածին · ա՟յ՝ յէութէ հօր: Ա՟ծ՝ յա՟յ, լոյս՚ի լուսոյ, ա՟ծ ճշմարիտ · յա՟յ ճշմարտէ ծնունդ, և ո՛չ արարած: Նոյն էակն ՚ի բնութ՟է հօր ·

Հօր. որով ամենայն ինչ եղեւ յերկինս, եւ ՚ի վերայ երկրի՝ երեւելիք եւ աներեւոյթք։ Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ՚ի յերկնից, մարմնացաւ մարդացաւ ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ կուսէն հոգւոյն սրբով։ Որով էառ զմարմին զհոգի եւ զմիտ. եւ զամենայն որ ինչ է ՚ի մարդ. ճշմարտապէս եւ ոչ կարծեօք։ Չարչարեալ խաչեալ թաղեալ։ Յերրորդ աւուր յարուցեալ։ Ելեալ ՚ի յերկինս նովին մարմնով՝ Նստաւ ընդ աջմէ Հօր։ Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ՚ի դատել զկենդանիս եւ զմեռեալս. որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան։ Հաւատամք եւ ՚ի սուրբ Հոգին՝ յանեղն եւ ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս եւ ՚ի մարգարէս եւ յաւետարանս. որ էջն ՚ի Յորդանան քարոզեաց զառաքեալսն եւ բնակեցաւ ՚ի սուրբսն։ Հաւատամք եւ ՚ի մի միայն ընդհանրական եւ առաքելական եկեղեցի։ ՚Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն, եւ ՚ի թողութիւն մեղաց։ ՚Ի յարութիւն

մեռելոց. 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց: Յարքայութիւն երկնից, և 'ի կեանսն յաւիտենականս:

## Մինչև ցայս էն Հաւատոյ բանք:

Իսկ որք ասեն, էր երբեմն՝ յորժամ ոչ էր որդի. կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր սբ հոգի. կամ թէ՝ յոչ էից եղեն. կամ յայլմէ էութենէ և 'ի գոյութենէ ասեն լինել զորդին այ և կամ զսբ հոգին. և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ՝ կաթուղիկէ և առաքելական եկեղեցի:

## Ի սրբոյ Լուսաւորչէն մերմէ Գրիգորէ Ասացեալ:

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս. երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն և միոյ ածութեն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

ՎԵՐՋ:

Ա. ԶԲ+ տատասօթեան:

Եղբարք սիրեցեալք օրհնեսցուք միաբանութե՛ զարարիչն ած արարածոց զամենակարօղ ըզ Հայրն ած: Օրհնեալ է ած:
Գովեսցուք և զծնեալն 'ի Հօրէ՝ նախ քան զյաւիտեանս · զմիածին որդին զբանն ած: Օրհնեալ է ած:
Բարեբանեսցուք և զբղխեալն 'ի Հօրէ՝ փառակից որդւոյ զճշմարիտ սբ Հոգին ած: Օրհնեալ է ած:
Միոյ տէրութեն և երեք անձնեայ ածութեանն՝ գոհացողական ձայնի՛ տացուք զփառս՝ և զերկրպագութի՛ս յաւիտեանս յաւիտենից: Ամէն:
Բոլորով սրտի՛ աղաչեսցուք զած, զի ող ծագեաց զլոյս աստուածու յարարածս իւր, ծագեսցէ և սրտմ զլոյսն իմանալի շնորհաց յանձինս մեր: Ամէն:
Արբեալ մաքրեսցէ զհոգի և զմարմինս մեր: Ամէն:
Լուսաւորեսցէ զաչս մտաց մերոց առ 'ի իմանալ զզօրութիւնս ածայինն պատուիրանաց: Ամէն:

Սուաու Միակամնաւ հմտանալ. Գործնա-
կանաւ զարգանալ. և Տեսականաւ
զուարճանալ։ Ամէն։

Փառաւորեսցուք զանուն ամենա͞սբ
երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգ-
ւոյն ս͞բյ յաւիտեանս։ Ամէն։

## Ա.ՂԲ· երեկոյեան։

Գոհացողական ձայնիւ միաբանու-
թբ տացուք ա͞յ մերոյ զփառս և
զգոհութիւն։ Օրհնեալ է ա͞ծ։

Որ արժանի արար զմեզ ՚ի տուընջեանս
այսմիկ, օրհնել և փառաւորել զահա-
ւոր և զսոսկալի զանուն քո ս͞բ։
Օրհնեալ է ա͞ծ։

Նա առաջնորդեաց մեզ խաղաղու-թբ
և անդորրութբ հասանիլ ՚ի ժամ երե-
կոյիս։ Օրհնեալ է ա͞ծ։

Գեր ընտիր և սրբազան վեհապետին
մերոյ տ͞ռն՝ այս անուն զկեանս երկար՝
խաղաղութբ պարգևեսցէ։ Ամէն։

Նա զկոստանդնուպօլսոյ գերախնամ
և զա͞ծարեալ Յոհաննէս երջանիկ
զարդ և բարեկարգ Պատրիարգն, եր

կար կենօք պահեալ՝ պարուցն երա_
նականաց արժանացուսցէ։ Ամէն։

Այլ զհեշտանան մեր ողջ խորհրդին և հոգւոյն
զօգուտն և զպիտանին ազգին մերոյ՝
զտմն զնա պահեսցէ անսասան ՚ի
ներքոյուս, և ՚ի հանդերձելումն ընդ
իշխանացն խաղաղկոյ և համազգայոյ
ուրախացուսցէ, հանդերձ ազգօք և
ժառանգակցօք։ Ամէն։

Մեծաջան աշխատութբ վաստակող
վարժապետին մերոյ, որ անդադար
զմեզ կրթէ և վարժէ, տացէ Տր ած
մեր՝ զօրութի և կարողութի։ Ամէն։

Երկրորդ պատճառի եղելութս մերոյ.
ջր՝ հարցն մերոց. որք զշաբաթականս և
լու ժամանակի պիտանաւորութեն՝ տան
զպարգևս և պատուէն զհոգևոր հայր
վարժապետն մեր սակս կրթման մերոյ,
տացէ տր ած տուրևատուեն նց զկէնուի
և զյաւատութի։ Ամէն։

Օրհնագումար նք ժողովս և զմխարքա
նութս մեր օրհնեսցէ, և յամ երևելեաց
և յաներևութից թշնամեաց զերծու
ցեալ ապրեցուսցէ։ Ամէն։

Հաւատով խնդրեսցուք ՚ի նմանէ՝ զի

զմնացուած ժամանակս կենաց պանդխ-
տութե մերոյ խաղաղութբ պահեսցէ: Ամն:
Ի չարեաց փրկեսցէ, ի մեղաց ազա-
տեսցէ, ի պիղծ խորհրդոց ի բանից և
ի գործոց սրբեսցէ: Ամն:
Ի գիշերային զարհուրանաց և ի ցը-
նորմանց բելիարայ զերծուսցէ. և
զզօրութիս խաւարասէր իշխանին խոր-
տակեսցէ: Ամն:
Եւ զիշխանութիս նր ընկճեսցէ. և զա-
տամունս նր փշրեսցէ. ի սահմանաց
և ի բնակութեանց մերոց զնա ի բաց
հալածեսցէ: Ամն:
Զբանակս հրեշտակաց առ ի պահպա-
նութի մեզ առաքեսցէ, ի նմ յանձն և
ապաստան արասցէ: Ամն:
Առաւօտու օրհնութեանց և փառաբանու-
թեանց զմեզ արժանաւորեսցէ. հաւատով
յուսով և սիրով զարդարեսցէ: Ամն:
Ի գործս առաքինութե և ածպաշտութե
արիացուսցէ. ամօթխածութբ և պարկեշ-
տութբ զգայարանս մեր ամրացուսցէ: Ամն
Շնորհօք և մարդասիրութբ ամենասուրբ
երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն
սբյ որում փառք յաւիտեանս: Ամն:

Տաղ մանկանց աշակերտական երբ արձակին 'ի
դպրատանէ յերեկոյեան ժամուն։



Շնոք քեզ քս՟ որ հասու ցեր.
'ի ժամս այս զանարժանս մեր
Ոչ ըս՟ գործոցն զոր առ սեր
այլ գթութեամբդ ներե ցեր։
Ըզ խակութիւն մեր կրթե ցեր.
և զթերութիւնս մեր լը ցեր։
Ընդ մանկանցըն զոր գըգուե ցեր.
աշակերտացըն քոյ ցու ցեր։
Սիրելեացըն քոյ ծանու ցեր.
նոցին նըման լինել ա սեր։
Նըման նոցա ըզմեզ ու սո՛.
և իմաստութիւք քոյին լը ցո՛։
Մանուկ մնացուք մըտօք 'ի լե.
որ քոյն կամացն է հաճե լե։
Շնորհիդ ըզմեզ տուն պատրաստեա՛.
բընակելոյդ արժան ա րա՛։
Յանկարգութեց ըզմեզ պա հեա՛.
'ի չար ընկերաց ազա տեա՛։
'Ի մարմնականն փարուց զա տեա՛.
առ հոգեկանն բարբո քեա՛։
Վարժապետին մեր հոգե կան.
համբերութիւն և երկար կեան։

Զի անդամանդեայ զմեզ վարժես ցէ·
և զօգտակարին մեզ ուսուս ցէ։
Եւ արդ ձանձրութե միշտ կրթես ցէ·
և զթերութիւնըն մեր լըց ցէ։
Ըզ հարկաւորսըն հաւա տոյ·
որք են օգուտ մերոյս հոգ ւոյ։
Ընկերակիցացըս միա բան·
տուր մեզ շընորհ ա̅ծ և բան։
Զի օրհնեսցուք միաբե րան·
մինչև 'ի կէտ յետին կոչ ման։
Հայր մեր՝ որ յերկինս ես, ս̅բ եղի"։

---

## Աէղան օրհնէք։

Օրհնեսցուք մեք միա բան·
զհայրն և զորդին և զս̅բ հո գին·
որ բարունեցէ պարգե ւինչ·
զոր վայելեն ազգ մարդկայ ին։
Յառաջ օրհնեմք ըզ տանու տէրս·
որ զմեզ կոչեաց 'ի միա սին·
և ըզ սեղանըս պատրա րեաց·
և պատրաստեաց զանոյշ գի նին·
սեղանըն քո օրհնեալ լի ցի·
յանեղական աջոյ վե րին·
որ զերողորմութըն իսրայէ լի·
նա կերակրեաց յանապա տին։
Ըյն որ ըզ հացն առատա ցոյց·
յ̅ս ք̅ս ա̅ծ որ դին·
զհինգ նըկանակըն բազմա ցոյց·

բաշխեաց եւ տուր հինգ հազա    րին։
Ուտողին կենաց ձեզ պարգե    ւէ.
զանձաւ սեղանին ՚ի յլիւր բա    րին.
տուր ՚ի բարիս քո յաւե    լու.
որ անըսպառ միշտ եղի    ցին։
Նոյն որ զաշխարհս ամէն տեղ    ծեաց.
եւ ՚ի վայել եւ մարդկայ    ին.
Նոյն օրհնութին ածայ    ին.
իջցէ ՚ի տունս այս վերըս    տին։
Բնեզ հովանի աջն անե    ղին.
եւ քո սեղանն ոչ պակա    սին.
որպէս ձեռամբ եղիսայ    ին.
առ սարեփթա սիդոնա    ցին։
Նու ըզ բաժակն ուրախա    րար.
օրհնեալ եւ տուր ընտրեալ գըն    դին.
օրհնէ զգինիս քո ամա    նոք.
զի որք ըմպէն ուրախաս    ցին։
Լցցի կարասըն ձեր գին    ւով.
շնորհօք անմահ թագաւո    րին.
որպէս երբեմն ՚ի հարսա    նիսն.
որ ՚ի կանա գալիլեայ    ին։
Ինքն որ օրհնեաց զհացըն աբրա    համ.
եւ բազմացոյց զզաւակ նո    րին.
օրհնէ զորդիս քո մարմնա    ւոր.
եւ զկողակիցդ ընդ սառայ    ին։
Ա արդարոյեան արարա    ծոց.
օրհնէ ըզ ձեզ զամենե    սին.
ըզ քահանայսըդ հաւա    սար.
եւ զժողովուրդս ՚ի մի ա    սին։
Նոյն որ ՚ի տան մաքսաւո    րին.
եթող ըզ մեղս զաքէո    սին.

զձեզ ՚ի մեղաց նա ազա — տէ ·
աղաչանօք ա͞ծած — նէն :
Բամից էից տէրն բարե — փութ ·
ըզ ձեզ պահէ իւր հովա — նին ·
աստէն ուրախ պահէ մարմ — նով ·
անդէն անձառ ՚ի լիւր բա — րին :
Դուք հրեշտակաց ա͞ծայ — ին ·
ձեզ պահապան միշտ եղե — ցին ·
և թշնամիք ձեր կործա — նին ·
թէ մարմնաւորք թէ անմար — մին :
Ը.չն երկնաւոր թագաւո — րին ·
որ տարածեաց ՚ի ձ͞ք խա — չին ·
որհնէ ըզ տունս և զծողս — վօրդս ·
և ըզ սեղանս բարեօք ՚ի — լին :
Պարգևատուն ամենայ — նի ·
որ կերակրեաց զամենե — սին ·
զտանըս բարիքն առատ առ — նէ ·
եկ.ք և բընակք միշտ յագես — ցին :
Սու փրկչեցեալըն հաւա — տար ·
որք ՚ի տանէ առտի գնա — ցին ·
յանձառելի խորանին հանդ — չին ·
և դասակից որբոց լի — նին :
Յետուն ա͞յ արժանա — նան ·
յաւուր մեծի դատաստա — նին ·
լսեն ըզ ձայնն երանա — ւէտ ·
յաջակողմեան դասուն խառ — նին :
Ի միասին զա͞ծ օրհ — նեսցեն ·
զհայրն և զորդին և զս͞բ հո — գին ·
և ասասցուք հայր մեր յե͞ր — կինս ·
ննջեցելոցըն թողու — թիւն :
Հայր մեր՝ ո[illegible] յեր՛ "նս ես , ս͞բ եղիցի" :